

կոր Դ.ի), որ ծածկեալ ունէր ի սրտի իւրում ի ձեռն Ոսկան վարդապետին միարանութեամբ Փափին կատարեաց,» Սակայն այժմ որո՞ւ ծանօթ չէ որ Ոսկան վարդապետ Երեւանցի վերջապէս Ամսդերտամ գնաց պարզապէս Պապական հսկողութիւնէ անկաշկանդ Հայկական տպագրութեան դործը յառաջ տանելու համար: Ո՞վ չի գիտեր թէ Ոսկան կ'ամբաստանուէր «գիրք հերետիկոսականք» տպագրելուն համար ուր «կային բանք բազումս անպատշաճք զլատինացւոց եւ զՀռոմէական հաւատոց...»: Տակաւին Ղըմպիկ Սահակ կը շարունակէ: «Ղով Հրաշալիմ բարձին, զի Բ (2) հազար շաբաթնոց պատմային տըւեր Ոսկանն...»: Ոսկան վարդապետ Ամսդերտամի մէջ հրատարակեց Ծարական մը 1664ին (որուն մէջ առաջին անգամ ըլլալով դործածեց ապագային հրատարակելիք Աստուածաշունչին համար պատրաստուած փայտափորագրեալ նկարներէն): Դժբաղդարար այս հրատարակութիւնը ձեռքի տակ չունիմ ստուգելու համար թէ «Ով Հրաշալի» շարականը կը պարունակէ՞ թէ ոչ: Հաւանաբար չի պարունակեր եւ պէտք չէ որ պարունակէ այդ ատելափառ նրդովքը, որ տեղ պէտք չէ ունենայ Հայ եկեղեցւոյ սրբազան գիրքերուն մէջ: Տարակոյս չունիմ որ Յակոբ Դ. ուղած էր այդ «Ով Հրաշալի» շարականը վերցրնել տալ եւ ինք մինակ ըլլալու չէր, լուրջ եւ գիտնական Հայ եկեղեցականներու մէջ այդ ցանկութիւնը ունեցող: Ինչպէս ըսինք ծանծաղամտութիւն պիտի ըլլար ասիկա «երկարնակութիւն» նկատելը: Չեռագիր Ծարականներուն ոմանց մէջ արդէն կը պակսի ան թէեւ մեծ մասը ունին: Բաւական թիւ մըն ալ կայ որոնցմէ այս կամ այն կերպով ջնջուած է վէճի առարկայ այդ հատուածը:

Ղըմպիկ Սահակ, իր նամակին մէջ այսքանով կը բաւականանայ: Սակայն Ոնոփրիոս վարդապետ Երեւանցին, Կարկուտ, կոչեցեալ, շատ աւելի անդիջող եւ քինախնդիր թշնամի Յակոբ Դ.ի, իր նամակին մէջ (որուն հրատարակուած ըլլալը յիշեցի քիչ առաջ), 17 կէտերով կ'ամբաստանէ կաթողիկոսը: Այս նամա-

կը՝ թէեւ երկար՝ շահեկան կը նկատեմ հոս հրատարակելու, քանի որոշ կերպով ցոյց կու տայ Յակոբ Կաթողիկոսը ամբաստանողներուն բուն նկարագիրը, սանձարձակ քինախնդրութիւնը, հետեւարար եւ իրենց ըսածներուն ի՞նչ արժէք ներկայացնելը: Այս նամակին հեղինակին համար գրչագիր նամականիին մէջ (Երուսաղէմ) ծանօթագրուած է «Կարկուտ Ոնոփրիոսի խաբեբայ ձեռագիրն է:» Յիշենք որ նամակը Եղիազար Այնթապցին է ստացողը, եւ նամականիին գրողը իր շուրջիններէն կրնար ըլլալ:

«Պատճառ դրոյս այս է, որ ի թուականութեանս Հայկազեանս տոմարի, հազար հարիւր եւ յերեքտասան (1664) ամի, յամսեանն Հոկտեմբերի, ի տիրաչէն մայրաքաղաքն յԵրեւան մեծահանգէս ժողով եղեւ երջանկափառ վարդապետաց, եւ արհիպպատիւ եպիսկոպոսաց, որ են այնոքիկ. նախ՝ Մուղնեցի Յովանէս վարդապետն, Միքայէլ վարդապետն, Մեծ Առաքել վարդապետն, Փոքր Առաքել վարդապետն, Լեհեցի Ստեփաննոս վարդապետն, Երեմիա վարդապետն, Պետրոս վարդապետն, Աւետիս եպիսկոպոսն, Սարգիս եպիսկոպոսն, Դաւիթ եպիսկոպոսն, Յակոբ եպիսկոպոսն, Գեղարդեցի Ստեփաննոս վարդապետն, Մանուէլ վարդապետն, Դաւիթ վարդապետն, Ղափանցի Բ. Մովսէս վարդապետն, Ծամպեցի Յոհան վարդապետն, Ներսէս վարդապետն, Պօղոտղ Տէր Ներսէսն, Սուսիկ Յովանէս վարդապետն, Ծատիկա առաջնորդն Մովսէս վարդապետն, Մշեցի Դաւիթ վարդապետն, Կողբցի Սարգիս վարդապետն, Փիլիպպոս վարդապետն, Ղափանցի Յովանէս վարդապետն, Բարսեղ վարդապետն: Սոքա ամենեքեան հանդերձ աշակերտօք եւ վիճակելովք իւրեանց, քահանայիւք եւ առ ձեռին իւրեանց իշխեցեալ համայն ժողովրդեան հաւանութեամբն համահաւաքեալք ի միասին. ընդ որս եւ ես նուստ ծառայ ծառայից Տեառն Աստուծոյ՝ Ոնոփրիոս վարդապետ Երեւանցի՝ գտեալ եղէ ի միջի նոցին, եւ ամենեքին սոքա վերոգրեալքս հարկեալ զնուաստութիւնն իմ բանիւ թղթով եղին